

դական ցեղեր, երբեմն հայացած՝ և երբեմն անգիտակից ազգային ու կրօնական հասկացողութեան: Եւ այս նախարարութիւններէն շատերը իրենց կիսանկախութեան ու երբեմն անկախութեան մէջ շարունակելով՝ ու հետզհետէ տկարանալով տիրող իշխանութենէն ու իրենց միջի զօրեղ նախարարութիւններէն, դարձեր են անոնցմէ մաս մը տեղական բնակիչներ, ու մաս մը կիսանկախ պէյեր և կամ աւազակ Տէրէ-պէյիներ:

Այս վիճակը որ առաջ կը բերէ յափշտակութիւն ու թշնամութիւն, հետզհետէ կը բաժնէ խաղաղ մասը անհանդարտ մասէն, որով քաղաքակրթական զարգացումն ալ իր որոշ դրոշմը կը դնէ ատոնց ամէն մէկ բաժնի վրայ:

Ահա թէ ի՞նչ կերպով է որ Քիւրդերը Հայաստանի մէջ եղած են և կան այժմ, և թէ ի՞նչպէս կան քիւրդացած Հայեր, ու եղած են Տէրէ-պէյի Հայեր ալ:

Հայ նախարարութեանց շրջաններուն ու Հայաստանի միացեալ զօրեղ իշխանութեան բացակայութեանը՝ նախարարութիւնները պահեր են պետական ձեւ՝ անգիտակցաբար կէս — ֆէդէրատիվ գծով. և ատոր համար տարացեղ նախարարութիւնները կարողացեր են ապրիլ քով քովի, ամէն մէկը իր հողին վրայ, միայն վտանգի դէպքին անոնք միացեր են, և իրենց զինւորական ուժը եղեր է տեղական միլիցիա (milice). Այս հաշուով է որ ամէն մէկ նախարարութիւնը կը հանէր իր տեղի, գիրքի, ու զօրութեան չափ զինւորական ուժ, որուն ցանկը կը տեսնենք հետեւող հատուածին մէջ:

Երկրի մէջ հաղորդակցութեանց բացակայութեան պատճառով, յաջորդող բոլոր իշխանութիւններու, — Հայ, Պարսիկ, Հռովմայեցի, Արաբ և Թիւրք տիրապետութեանց օրով անգամ, նախարարութիւնները մնացեր են կիսանկախ, և ո՛րքան դարերու հոլովական ընթացքը, տիրող կրօնական, քաղաքական, ընկերային և արուստական ազդակը ներդործեր, ու իր փոփոխակի խոր տպաւորութիւններով կաղապարեր է անոնցմէ ամէն մէկին ըստ իր հանդամանաց ու պարագայից, ա՛յնքան անոնք